



ASSOC.PROF.DR. JASMINE DUM-TRAGUT BACH.NAT.SC.
Dept. of Armenian Studies
 ZECO Center for the Study of the Christian East (Director)
Dept. of Linguistics
 University of Salzburg
 Mönchsberg 2A, 5020 Salzburg

Equine Sciences
 University of Veterinary Medicine, Vienna
 jasmine.dum-tragut@sbg.ac.at

ԿԱՐԾԻՔ

Զարուհի Հրայր Խաչատրյանի՝ ժ. 02.02 «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված՝

«Ձիանունները պարսկերենում և հայերենում. Համեմատական ուսումնասիրություն» թեմայով ատենախոսության մասին:

Նախ կցանկանայի շեշտել, որ սույն կարծիքում հետևում եմ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ցուցումներին, բայց նաև գիտական աշխատանքների վերաբերյալ Կենտրոնական Եվրոպայում ընդունված պահանջներին՝ ակադեմիական որակավորման ոլորտում: Ուստի կքննարկվեն այդն ատենախոսության տրամաբանական կառուցվածքը, մեթոդաբանությունը, հետազոտության ներկայացումը, արդյունքները, եզրակացությունը, և մի քանի դիտողություն կարվի ընդհանուր լեզվաբանության, հայագիտության և ամենավերջում, ինչը բացարձակապես անհրաժեշտ է, ձիագիտության տեսանկյունից:

Սույն ատենախոսությունը, որը բաղկացած է ներածությունից, երեք թեմատիկ գլուխներից, եզրակացությունից և մանրամասն հավելվածից, ներկայացնում է պարսկերենում և հայերենում «ձիանունների» բառաֆոնոլոգի ընդգրկուն ուսումնասիրություն:

Ատենախոսը դա անում է այն կորպուսի հիման վրա, որը նա հավաքել է հիմնականում պարսկերեն և հայերեն բառարաններից և երկու գրականությունից համեմատաբար փոքր թվով բնօրինակ աշխատանքներից:

Պարսկերենի կորպուսի հիման վրա ատենախոսը փորձել է գտնել և նկարագրել «ձիանունները» և հնարավորինս հայերեն թարգմանել դրանք ու տարբեր բառարաններում տրված նկարագրություններ և բացատրությունները: Հայերենի կորպուսից ուղղակիորեն վերցված են առկա նկարագրություններն ու բացատրությունները:

Լեզվաբանական տեսանկյունից, սույն ուսումնասիրությունը պատկանում է մասնագիտական բառապաշարի և տերմինաբանության ուսումնասիրության ոլորտին, սվյալ դեպքում՝ ձիական բառապաշարի:

Այդ պատճառով վերնագրի և «ձիանուն» բառի ընտրությունը գիտականորեն ճիշտ չի կարող համարվել. եթե «ձիանունը» դիտարկվում է որպես լեզվաբանական տերմին (ինչպես օրինակ՝ գետանուն, տեղանուն, ազգանուն), ապա աստենախոսության վերնագիրը կրնա թաղանթ, որ սա օնումաստիկ և ոչ թե բառապաշարի (տերմինաբանության) ուսումնասիրություն: Փաստորեն այս ուսումնասիրությունը ձիերի վերաբերյալ բառապաշարի մասին է, որը միայն փոքր չափով է իսկապես ներկայացնում հիպոնիմներ:¹

Մասնագիտական բառապաշարի ուսումնասիրությունը հիմնված է ոչ միայն կորպուսի, այլև տարածամանակյա ուսումնասիրության, բառակազմության, բառակապակցության և ձևային նկարագրության, ինչպես նաև բառի ստուգաբանության վրա: Առանձնահատուկ նշանակություն ունի տարածամանակյա գործոնը փոխառյալ բառերի համար: Պետք է ստույգ դիտարկվի նաև փոխառությունների հասարակական-լեզվական-պատմական պատմությունը, և այդպիսով՝ մասնագիտական բառապաշարի մեկ լեզվից մյուսը փոխանցման ժամանակաշրջանը: Մասնագիտական բառապաշարը պետք է առանձնացվի ընդհանուր բառապաշարից:

Ներածության մեջ (4-18) հեղինակը նախ նկարագրում է իր հետազոտության նպատակները՝ ենթադրելով, որ մասնագիտական բառապաշարը կարևորությունը ունի ազգի մշակույթի, արժեքների և կենցաղի վերաբերյալ տեղեկատվության համար: Ներածության մեջ ես կցանկանայի գտնել պարսկական և հայկական ձիական գրականության զարգացման համառոտ ակնարկ:² Միայն պատմական զարգացման հիման վրա կարելի է հասկանալ ձիերի վերաբերյալ բառապաշարի կառուցվածքը:

Ինչ վերաբերում է հետազոտության կարգավիճակին, հեղինակը 6-րդ ու 15-րդ էջերում նշում է, որ «պարսից լեզվի բառապաշարում ձիանունները չեն ենթարկվել նաև լեզվաբանական լուրջ ուսումնասիրության», և որ հայերեն ձիերի վերաբերյալ բառապաշարի վերաբերյալ ծավալուն գիտական ուսումնասիրություններ նույնպես չեն եղել և չկան: Թրախտաբար, ես պետք է չհամաձայնեմ սրա հետ, քանի որ գերմանալեզու արևելագիտությունը և ձիագիտությունն արդեն ուսումնասիրում էին 20-րդ դարի առաջին կեսի ձիերի վերաբերյալ իրանական մատյանները և ձիերի վերաբերյալ բառապաշարը³, ինչպես նաև կատարում բառարանագրական ուսումնասիրություններ ձիու երանգների ու նշանների վերաբերյալ:⁴

¹ Ska Romanova T. P. (1991) The Main Semantic Components of the Hipponym and the Structure of the Hipponymic Field: the collection of scientific papers, pp. 151-157. Алексеева Н.М (2019) Таксономичний аспект Дослідження Гіппонімів. Романські, германські та східні мови УДК 811.111:81'37:81'276.6:636. Романова Т. П. (1988): Система русских официальных иппонимов и формирование ее типологических черт : канд. филол. наук : Воронеж.

² Օրինակ՝ Farasnāma <http://www.iranicaonline.org/articles/faras-nama>: Farasnāmah Encyclopedia Islamica, Brill. https://referenceworks.brillonline.com/entries/encyclopaedia-islamica/farasnamah-COM_037161.

³ Froehner, R.: *Zur persischen Hippologie und Hippiatrie des 11. Jahrhunderts*. In: Abhandlungen aus der Geschichte der Veterinärmedizin. Heft 20. Leipzig 1929.

⁴ Froehner, R.: *Historisches zu den Pferdefarben*. IN: Beiträge zur Geschichte der Veterinärmedizin. Jahrg. II (1929), Heft 4. b) Die weißen und grauen Farben. Jahrg. II (1940) Heft 5, S. 275-310. c) Die braunen, roten und gelben Pferde. Jahrg. III (1940), Heft 1, S. 9-36. d) Die Rappen. Jahrg. III (1940), Heft 1, S. 36-46. e) Die Schecken, Tiger und stichelfarbigen Pferde. Jahrg. III (1940) Heft 2, S. 105-117.

Բացի այդ, արաբա-պարսկական ձևերի վերաբերյալ բառապաշարը բազմիցս ուսումնասիրվել է նաև հայտնի արևելագետների կողմից⁵: Ավելին, Մյունխենի անասնաբուժության համալսարանը կենտրոնացել է բազմաթիվ տասնամյակների ընթացքում հունական, ինչպես նաև արևելյան ձիաբուժական և ձիաբուշական մատյանների վերլուծության և թարգմանության վրա:

Անդրադառնալով հայկական ձիերի վերաբերյալ բառապաշարի և տերմինների վերաբերյալ հետազոտություններին՝ Յ. Դում-Տրագուսն արդեն 2005-ին (!) հրատարակել է Մատենադարանի ձեռագրի 10975⁶ ծավալուն թարգմանություն, ձիագիտական ու անասնաբուժական վերլուծություն և մեկնաբանություն⁷, ինչպես նաև տարբեր հոդվածներ ձիերի վերաբերյալ բառապաշարի և հիմնական այլ հայերեն ձիագիտական ձեռագրերի թարգմանության վերաբերյալ⁸: Այս հոդվածներում և գրքերում նա հավաքել է հայերենի ձիերի վերաբերյալ բառապաշարը՝ ստուգաբանություններով, բացատրություններով և թարգմանություններով՝ գերմաներեն կամ անգլերեն ձիագիտական կամ անասնաբուժական տերմինաբանությամբ:

Այն փաստը, որ տվյալ «արևմտյան» ձիագիտական-լեզվաբանական հետազոտությունը բոլորովին չի դիտարկվում սույն ատենախոսության մեջ, թերություն է. սույն հետազոտական աշխատանքի զգալի մասն արդեն արդեն կատարվել է տասնամյակներ առաջ:

9-րդ էջից սկսած՝ հեղինակը թվարկում է իր ընտրած բառարաններն ու աղբյուրները: Այս կորպուսը ճշտորեն մտածված և համապարփակ է, բայց անհրաժեշտ էր այն ստուգել համապատասխան արաբական բառարանների և հատկապես ձիական տերմինների արաբական բառարանների հետ:⁹

⁵ *La parure des cavaliers et l'insigne des peux* écrit en 1365 par Ali Ben Abderrahman Ben Hodeïl el Andalusy pour le sultan Mohamed V, traduction française : Louis Mercier, Librairie Paul Geuthner, 1924. Hammer-Purgstall, J.: *Das Pferd bei den Arabern*. In: Denkschriften der kaiserlichen Akademie der Wissenschaften. Wien. Bd. 7, 1856, S. 147-208. *Le Nacéri*. La perfection des deux arts ou Traité complet d'hippologie et d'hippiatrie arabes. Traduit de larabe d'Abou Bekr Ibn Bedr. Paris 1859.

⁶ Չուգասյան, Բ. Լ.: Բժշկարան ձիոյ եւ առնասարակ գրաստնոյ (ԺԳ. դար). Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ Հրատարակչություն 1980.

⁷ Dum-Tragut, J.: *Das kilikische Heilbuch für Pferde. Übersetzung – Kommentar – Glossar*. Hildesheim, Zürich: OLMS Verlag 2005

⁸ Դում-Թրագուսի ձիագիտական-հայագիտական հոդվածներից ա) *The Cilician Medical Book for Horses. On terminological work and interdisciplinary research*. Handes Amsorya 2005, 1-12. Yerevan 2006. բ) *Horse and knighthood in Cilician Armenia*. In HASK. Proceedings of the First international Conference on Cilician Armenia, Antelias 2009. գ) *The legendary white horses: A Linguistic and cultural view on white horses in Armenia (and its neighbouring countries)*. In: Cultural, linguistic and ethnological Interrelations in and around Armenia. Bläsing Uwe., Dum-Tragut J. (eds). Cambridge 2011. դ) *Die jahrhundertelange Tradierung antiken und mittelalterlichen pferde(heil)kundlichen Wissens. Eine fragmentarische armenische Pferdehandschrift. Übersetzung. Analyse. Besprechung*. Veterinärmedizinische Universität Wien 2014. ե) *Apfel und Birnen – Reflektionen über pferdeanatomische Terminologie*, in: Akten der ÖLT 2013, Salzburg. Innsbruck 2015. զ) *The Horse in the Armenian Highlands. A view on late medieval Armenian horse manuscripts.* in Journal of the Society of Armenian Studies, 2015. է) *Auf Hufspuren durchs alte Persien. Historische Pferderassen auf persisch-armenischem Gebiet*, in: Giebauf, J. (Hg.): *Zwischen Karawane und Orientexpress. Streifzüge durch Jahrtausende orientalischer Geschichte und Kultur. Festschrift für Hannes Galter*. Münster: Ugarit Verlag, 2017, S. 59-80. թ) *Bewerhas, Asahar und Raysay* (Nageltritt) – Lehnübersetzung, Neologismus und korrupte Entlehnung. Das Tohuwabohu von Krankheitsbezeichnungen in armenischen pferdeheilkundlichen Manuskripten, in: *Commentaria Classica, Studi di filologia greca e latina*, 2018, V, 359-382. ռ) *Medieval Equine Medicine in Armenia*. In: *Equine Sciences*, հրատարակվելու է 2020.

⁹ Lane, E.W.: *Arabic-English Lexicon*. 8 vol. London. Williams & Norgate 1863.

<http://www.tyndalarchive.com/TABS/Lane/> Watson, J.: *Lexicon of Arabic horse terminology*. London, New York: Kegan Paul International 1996. Watson, J.: *A lexicon of Cairene Horse Terminology*. In: *Journal of Semitic Studies*.

Գլուխ I Ձիանունները պարսկերենում

Նախ, ընտրված կորպուսում հայտնաբերված բոլոր բառերը դասավորված են թեմատիկ ձևով, այնուհետև դասակարգվում և հիմնվում են ըստ լեզվական ծագման: Թեմատիկ բաժնում նշվում են ընդհանուր առմամբ ձիերին վերաբերող բառերը արական, իգական ձիերի, ձիու ձագերի և տարիքային տարբեր խմբերի, այնուհետև բառերը խմբավորվում են ըստ առարկայական տարբեր ոլորտների:

Նպատակահարմար կլիներ հետևել ձիական բառարանների միջազգայնորեն ընդունված ստորաբաժանմանը: Ձիու անատոմիայի և հիվանդությունների բառապաշարը, որը հսկայական նշանակություն ունի ձիու սոցիալ-պատմական կարևորության հարցում, ինչպես նաև՝ թամբասարքի կամ ձիավարության բառապաշարը, ցավոք, մնում է աննշակ: Մյուս կողմից, ձիու քայլերի և շարժման ձևերի նկարագրությունը սահմանափակ է:

Գլուխ 1.2.

Իրանական ծագման ձիու վերաբերյալ բառապաշարի ուսումնասիրությունը ներկայացնում է սույն ատենախոսության ամենակարևոր լեզվամշակութային-պատմական տեղեկությունը: Ատենախոսը մանրամասնորեն տալիս է կորպուսում ներկայացված աղբյուրների բոլոր նկարագրություններն ու բացատրությունները:

Գլուխ 1.2.2. հետազոտում է արաբերեն փոխառությունները: Հեղինակն առաջարկում է ստուգաբանություններ՝ հիմնված արաբերենի արմատական հիմքի վրա:

Արաբական ձիական գրականության և բառարանների օգտագործումը ազդեցություն կունենար հեղինակի ստուգաբանական հետազոտության վրա. նախ՝ արաբերեն տերմինների ճշգրիտ ու բուն նշանակությունը իմանալու և այդպիսով պարսկերենում իմաստի փոփոխությունը պարզելու համար (իմաստի ընդլայնում կամ նեղացում):

Օրինակներ՝

- էջ 57 «*Āzar* (آزر): ձի, որի ոտքերի երկու ազդրերը սպիտակ են, 2 ձի, որի առջևի ոտքերը սպիտակն են կամ մեկ այլ գույնի:
Արաբերեն ձիական բառաֆոնդում այս տերմինը օգտագործվում է սպիտակ գավակ ունեցող ձիու համար:
- էջ 58 *ahamm* (احم) սև ձի, բոց «սև գույն»:
Արաբերեն տերմինը նշանակում է սև ձի, որը սև երանգից բացի ունի առնվազն որոշ քանակությամբ կարմիր և դեղին երանգներ:
- էջ 59 *adam* (ادم) սև քթով ձի (..)
Արաբերենում նշանակում է սև շրթունքներով ձի:
- էջ 59 *adham*, (ادهم)
Ատենախոսը թվարկում է մոխրագույնի տարբեր երանգներից գույներ՝ մոխրագույնից մինչև սև, մինչդեռ արաբերենում ակնհայտ է՝ սովորական մաքուր սև ձի:

• էջ 63

Արաբերենում *ayar* (أغر) և *aqrah* (أقره) բառերը հականիշներ են. պարսկերենում *ayar* նշանակում է «ճակատին սպիտակ բիծ ունեցող ձի». սա մոտենում է արաբերեն տերմինի բուն իմաստին, որը նշանակում է ձի, որն ունի ճակատին աստղ, որն ավելի մեծ է, քան դիրհամը: Ճիշտ պահպանված է *aqrah*, որը նշանակում է «ձի, որի ճակատին սպիտակ նշան կա արծաթյա դրամանոցի չափով փոքր կամ ավելի փոքրիկ». Արաբերենում դա ակնհայտորեն ձիու նշանն «աստղ որը դիրհամից մեծ է»:

Նման օրինակներ ատենախոսության մեջ շատ կարելի է գտնել:

Փոխառությունների նկարագրության համար անհրաժեշտ է բուն իմաստը տալը: Սա հատկապես հետաքրքիր է, եթե նույն արաբերեն բառն օգտագործվում է նաև հայերեն տեքստերում՝ մի փոքր այլ իմաստով: Հայերենը հաճախ ավելի մոտ է բուն իմաստին, քան պարսկերենը:

Օրինակ,

• էջ 58 *Arsam* (ارثم)

Պարսկերենը գրեթե վերարտադրում է արաբերեն բառի բուն իմաստը, այսինքն՝ վերին շրթունքի վրա խայթոց, վերին շրթունքի փոքրիկ սպիտակություն («snip on the upper lip»). Նույն իմաստը մնացել է հայերեն «ռայֆիմե»-ում (որը հեղինակը անտեսել է):

• Կամ էջ 75, *ya'sub*, պարսկերենում նշանակում է «ձի որի դեմքին սպիտակ բծեր կան» այլևս չի համապատասխանում արաբերեն իմաստին՝ նեղ քթածորան («line blaze»), հայերենում *խազուֆ* (էջ 92: «ՄԲՀ, 260 սպիտակ հատվածներ ձիու դեմքի վրա» և նշանակությունը «Թե լինի քտին վրայ սպիտակ, զեղ խազ խազ եւ չհասնի ինջվի ճակատն ու կամ ի յաչքն, նա ասեն իր խազուֆ» ավելի ճիշտ է բնօրինակ միջնադարյան ձիաբժշկարանում:

Գլուխ II Պարսկերենում վկայված ձիական բառերով հայերենում (81-109)

Երկրորդ գլխի վերնագիրը մի քիչ ապակողմնորոշիչ է, լեզվաբանորեն պետք է թվարկվեն միայն բուն, այսինքն՝ պարսկերեն ծագումով տերմինները հայերենում և ոչ թե նաև արաբերեն փոխառված տերմինները:

Գլուխ II.2.ում թվարկված ձիական բառերի կիրառությունը ժամանակակից հայերենում և բարբառներում հատկապես գրավում է ընթերցողի ուշադրությունը: Չնայած մի փոքր հնացած, Ափինյանի «Ձիաբուություն» գրքի մեջ օգտագործված բառապաշարը պետք է ներառված լիներ ատենախոսության այս հատվածում¹⁰: Օգտակար կլինեն ներառել որոշ հարցազրույցներ հայ ձիաբույժների և փորձագետների հետ: Հատկապես ձիու երանգների, նշանների բնագավառում:

Գլուխ III Ձիանունների գրական և դարձվածաբանական վկայությունները (110-134)

Պարսկական գրականության մեջ հայտնաբերված տերմինները, մեջբերումները և անվանումները ցույց են տալիս ձիու սոցիալ-մշակութային նշանակությունը: Սա հեղինակի կորպուսի համար ճիշտ մոտեցումն է:

¹⁰ Ափինյան Գ. Կ. Ձիաբուություն. Երևան, Հայպետհրատ 1954.

Վերջում, գլուխ 3.2ում հեղինակը ցույց է տալիս, թե ձիերի հետ կապված որքան թևավոր խոսքեր խոսքերի, փոխաբերություններին և բառերի են ձևավորվել: Այս փաստը կարող է համընկնել ինչպես հայերենի, այնպես էլ արաբերենի հետ, գուցե նույնիսկ միջազգային մակարդակում:

Եզրակակացությունները (135-140)

Եզրակացություններում հեղինակը քննարկում է իր ուսումնասիրության կարևորագույն արդյունքները՝ ենթադրելով, որ ընդհանուր բառապաշարից շատ բառեր փոխել են իրենց բուն իմաստը՝ ձիական բառապաշարում ընդգրկվելով: Սա վերաբերում է և՛ պարսկերեն, և՛ փոխառված բառերին: Այնուամենայնիվ, ինչպես և սպասվում էր, ձիական բառերի մեծ մասը ծագում է արաբերենից (կետ 5, էջ 137): Պետք է ավելացնել, որ միջնադարում արաբերենը կարևոր դեր է խաղացել որպես գիտության և մասնագետների լեզու, մանավանդ այս տարածաշրջանում, հատկապես բնագիտության և բժշկության և, այդպիսով նաև անասնաբուծության և ձիաբուծության ոլորտում: Եվրոպական տերմիններ նույնպես մտել են ձիական բառապաշարի մեջ, առաջին հերթին խաչակիրների հետ շփման միջոցով, ինչպես նաև արևելյան քրիստոնյաների միջոցով: Փոխառված տերմինների այս նոր շերտը երևում է հատկապես 13-րդ և 14-րդ դարի հայկական ձիաբժշկարաններում:

7-րդ կետում, էջ 138, ատենախոսը պնդում է, որ ձիական տերմիններն ավելի շուտ հանդիպում են գրաբարում, իսկ ավելի քիչ՝ միջին հայերենում, որտեղ գերակշռում է արաբերենի ազդեցությունը: Կցանկանայի նշել, որ սա ճիշտ է միայն բառապաշարի որոշ մասերի համար. անատոմիայի և հիվանդությունների տերմինների շարքում կան ժողովրդական արտահայտություններ, որոշ դեպքերում՝ բառացի պատճենումներ:

9-րդ կետում նա առանձնացնում է այն պարսկերեն տերմինները, ա) որոնք նույնպես վկայված են պարսկերենում և բ) որոնք պարսկերենում գոյություն չունեն: Վերջիններից շատերը ածանցավոր և բարդ բառեր են:

11-րդ կետում նա կրկին քննարկում է օգտագործված երեք ձիամատյանները և շեշտում է, որ պարսկական ձիագիտական գրականության լայնությունը հաշվի առնելով՝ սույն ուսումնասիրությունը կարող է ներկայացնել պարսկերեն բառապաշարի հարստության միայն մի մասը:

Գրականության մանրամասն ցանկից բացի, հավելվածը պարունակում է նաև շատ օգտակար ցուցակներ և աղյուսակներ:

Ամփոփելով՝ ես միանշանակ շատ կցանկանայի ընդգծել հեղինակի կատարած ծավալուն գիտական աշխատանքը, հատկապես կորպուսի կազմի առումով: Բոլոր բառերի թեմատիկ խմբավորումը և բնիկ պարսկերեն բառերի ստուգաբանությունը օրինակներ են այն բարդ աշխատանքի համար: Գովելի է նաև հեղինակի էներգիան և նկատելի ոգևորությունն ու մեծ հետաքրքրությունը տվյալ թեմայի և ուսումնասիրության նկատմամբ:

Սյուն ատենախոսությունը ինձ ամբողջությամբ չհամոզեց, մասնավորապես ընդհանուր լեզվաբանության տեսանկյունից: Պարսկերեն բառապաշարի հստակ

տարածամանակյա վերլուծության, բառի ձևավորման և կազմության, ինչպես նաև փոխառված բառերի փոխանցման վերաբերյալ տեղեկատվության պակաս կա: Ուսումնասիրված նյութը հիմնականում չի պատկանում պարսկերեն կամ հայերեն ընդհանուր բառապաշարին, այլ փաստորեն ներկայացնում է մասնագիտական բառապաշար կամ լեզվի հատուկ մակարդակ, օգտագործված միայն փորձառու ձիաբույժների ու ձիու մասնագետների կողմից:

Իմ կարծիքով ատե ն ախո ց ու թ յ ան ամենամեծ թերությունը պարսկերեն, արաբերեն և հայերեն ձիագիտական բառապաշարի վերաբերյալ հրատարակված արևմտյան ուսումնասիրությունների, ինչպես նաև այդ թեմայով ձիագիտական գրականության պակասն է:

Եզրափակելով, կցանկանայի շեշտել, որ ատենախոսն իր ուսումնասիրությամբ նպաստել է պարսկերեն և հայերեն մասնագիտական (ձիերի վերաբերյալ) բառապաշարի հետազոտությանը:

Անհրաժեշտ է վերանայել ատենախոսությունը եվրոպական և արաբական աղբյուրների և գիտական գրականության պակասի հետ կապված, և, նախևառաջ, խորհրդակցել ձիագիտական մասնագետի:


Այնուամենայնիվ, պետք է ընդգծել ատենախոսի նվիրվածությունն ու խիզախությունը: Չիագետ չլինելով և ակնհայտորեն չունենալով մասնագիտական գիտելիքներ, ատենախոսը ռիսկի է դնել զբաղվելու ձիերի վերաբերյալ բառապաշարի բարդ թեմանով: Հետևաբար հասկանալի է, որ ձիագետի տեսանկյունից կան որոշ սխալներ և թյուրըմբռումներ, թերություններ և պարսկերեն ձիական բառապաշարի ոչ ամբողջական հետազոտություն:

Գիտության մեջ երբեմն պետք է ռիսկի դիմել՝ նոր բան սովորելու համար:

Հուսով ենք ատենախոսությունը հրատարակության պատրաստելիս, հեղինակը հաշվի կառնի բոլոր դիտարկումները և նկատառումները, իսկ տվյալ տեսքով արդեն, ատենախոսությունը համապատասխանում է այսպիսի աշխատանքների համար առաջադրվող պահանջներին:

Ուստի միջնորդում եմ հարգաբաժան խորհրդին, Զարուհի Հրայրի Խաչատրյանին շնորհել իր հայցած գիտական աստիճանը:

Զայցբուրգ, 22.01.2020


Assoc. Prof. Dr. Jasmine Dum-Tragut Bach. Nat. Sc.